# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

2020 թվականի փետրվարի 07-ի

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 295 -Ա

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով՝

***ո ր ո շ ու մ եմ.***

1.Արցախի Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի 2020 թվականի մարտի 31-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել անվճար տեղեր՝ համաձայն հավելվածի:

2.Առանձնացված տեղերում տեղադրված վահանակների համապատասխան հատվածում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրել Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում անցկացված վիճակահանության արդյունքում Արցախի Հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հերթական համարների հաջորդականությամբ՝ ուղղահայաց ձևով, A-4 ձևաչափի (210X297մմ) մակերեսով, 2020 թվականի փետրվարի 26-ից մինչև մարտի29-ը ներառյալ:

3.«Բնակարանային շահագործման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ապահովել գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված Արցախի Հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի հանումը, վերահսկել ընտրություններից

հետո քվեարկված թեկնածուների կողմից քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի հանման գործընթացը:

4.Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի բնակարանային, կոմունալ տնտեսության և բնապահպանության բաժնին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Դ.ՍԱՐԳՍՅԱՆ**

**2020 թվականի [illegible] 07**

**ք.Ստեփանակերտ**

Հավելված
Ստեփանակերտի քաղաքապետի
2020 թվականի փետրվարի 07-ի N295 Ա որոշման

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐԻ**

(քաղաք Ստեփանակերտ)

1.Վ.Վաղարշյանի փողոց N92 (N17 երթուղու վերջին կանգառ)
2.Վ.Վաղարշյանի փողոց N7 (զինվորական վարժարան)
3.Մ.Բաղրամյանի փողոցի N1 և Ա.Մկտրչյանի փողոցի N4 շենքերի հարակից տարածք
4.Վ.Մամիկոնյանի փողոց N15 (ԱՀ հաշվեքննիչ պալատի հարակից տարածք)
5.Վ.Սարգսյանի փողոցի N11 շենքի հարակից տարածք
6.Փետրվարի 20-ի և Վ.Սարգսյանի փողոցների խաչմերուկ
7.Ազատամարտիկների փողոցի N21, N28 շենքերի հարակից տարածք
8.Ազատամարտիկների փողոց N35 (ավտոկայանի հարակից տարածք)
9.Ալ.Հեքիմյանի փողոց N11, N30 (Ս.Հակոբ եկեղեցու հարակից տարածք)
10.Ալ.Հեքիմյանի փողոց N1 (հ.10 հիմնական դպրոցի հարակից տարածք)
11.Ս.Դավթի փողոց N12 (կենտրոնական շուկայի հարակից տարածք)
12.Տ.Մեծի փողոց N8բ/1, N19 (զինվորական հոսպիտալի հարակից տարածք)
13.Ալ.Մանուկյանի փողոցի N11, N13 շենքերի հարակից տարածք
14.Մարտունու և Ուլուբաբյանի փողոցների հատման խաչմերուկ
15.Մ.Շահինյանի փողոց N38 (N14 երթուղու վերջին կանգառ)
16.Ուլուբաբյանի և Առուշանովի փողոցների հատման մաս (Առուշանովի փողոցի N1ա տան հարակից տարածք)
17.Առ.Առաքելյանի փողոց N2, N4 (N16 երթուղու վերջին կանգառ)
18.Զորգե փողոցի N29, N30 տների հարակից տարածք
19.Գ.Զաուշի և Պուշկինի փողոցների խաչմերուկ
20.Շինարարների փողոցի N50 և Նաբերեժնայա փողոցի N32 տների հարակից տարածք
21.Մ.Գոշի փողոցի N3 շենքի հարակից տարածք
22.Վ.Սարոյանի և Կամոյի փողոցների խաչմերուկ
23.Վ.Մամիկոնյանի փողոց N16 (ֆիզմաթ դպրոցի հարակից տարածք)
24.Ս.Դավթի փողոց N50 (Կարմիր խաչի միջազգային կազմակերպության շենքի հարակից տարածք)
25.Ս.Շահումյանի անվան պուրակի հարակից տարածք («Ամերիաբանկ» ՓԲԸ հարակից տարածք)
26.Դանիելյանի փողոցի N5 տան հարակից տարածք
27.Ուլուբաբյան-Ակ.Սախարով-Փաշաև փողոցների խաչմերուկ
28.Հին Արմենավան մարզադաշտի հարակից տարածք
29.Աջափնյակ թաղամաս (կանգառի մոտ)
30.Նոր Արեշ թաղամաս (կանգառի մոտ)
31.Նաբերեժնայա փողոց (ԱՀ քաղաքաշինության նախարարության շրջակա տարածք)
32.Զինկոմիսարիատի հարակից տարածք

33.Ալ.Հեքիմյանի փողոցի N3վ շենքի շրջակա տարածք
34.Գր.Լուսավորչի և Իսրայել Օրու փողոցների խաչմերուկ
35.Վ.Սարգսյանի փողոցի N25 շենքի դիմացի տարածք
36.Ավ.Իսահակյանի և Վ.Վաղարշյանի փողոցների խաչմերուկ
37.Տերտերյանի և Մետաքսագործների փողոցների խաչմերուկ
38.Արցախ թաղամասի N3-4 շենքերի հարակից տարածք
39.Ադմ. Իսակովի փողոցի N4ա շենքի հարկից տարածք